

երկի սիջատներից։ Ո՞չ, այդպէս չէ, դրա համար չէ»,— իսը չեն, այլ ժողովրդինը. ես պարտաւոր էի այդ յառաջ քերել, որովհետև, տեսէք թէ դա որքան նմանութիւն ունի մեր նախնիների և վայրենիների տուած բացատրութեան հետ և որքան անհրաժեշտ են ուսումնասիրութեան համար.— «Мож-
но бы назвать его (отоны) человечкомъ потому, что какъ у
человѣка, природа у него двоякая, физически, онъ... гото-
вить тѣду, питаетъ тѣло, даетъ человѣку чи-
стоту» Կայզֿ (*):

Եթէ արժ. Ղըտճեան ազգագրական պատրաստութիւն ու-
նենար, կը հասկանար, որ Հանդիսի բ. գրքի 140 երե-
սում նորահարսը օջաղը համբուրելու և տան ծերունին
նրան օրհնելու նկարագրութիւնից յետոյ դրուած «որ-
քան նմանութիւն ետրուաքների սովորութիւններին» ծա-
նօթութիւնն արդէն ցոյց է տալիս, որ ես ծանօթ եմ
օջաղի պաշտաման, և միայն չեմ ցանկացել սկսնակի պէտ
նիւթի մէջ ուսումնասիրութիւն խառնել, և եթէ «թոնրի պսա-
կը» «օջաղի պսակից» տարբերել եմ, այդ ոչ թէ նրա համար
է, որ ես «չեմ հասկանում, որ օջաղն ու թորոնը միենոյն օ-
ջաղի գաղափարն են ներկայացնում», այլ որովհետև «թոնրի
պսակը» աւելի նախնական եմ համարել, իսկ «զենսուի պետի»
օջաղի վրայ կատարուող պսակը աւելի ուշ, երբ օջաղի պաշ-
տամունքը միախառնուել է հոգու և նախնաօր պաշտաման հետ։

Բաւականանալով այսբանով՝ մենք ինդրելով ինդրում
ենք, որ մեր մասնագէտները քննեն մեր գործը, առաւելա-
պէս ուշադրութեան առնելով մեր ծրագիրը և նրա իրագոր-
ծելու եղանակը, որպէսզի միւս գաւառներում նիւթեր հա-
ւաքելիս մենք կարողանայինք բաներ բաց չթողնել, քանի որ
նրանք այսպէս արագութեամբ կորչում են։ ուսումնասիրու-
թեան համար շատ ժամանակ կայ և միշտ կը լինի, պէտք է
շտապել նիւթերը կորստից ազատելու։

Ե. ԼԱԼԱՅԵԱՆ

ՆՈՐ ՍՏԱՑՈՒԱՆ ԳՐԻՔԵՐ

- 1) Մ. Գօր'կիյ՝ «Դանկօի սիրտը», թարգ. Ա. Աթայեան,
Թիֆլիս, 1904, գ. 3 կ.։
- 2) Մ. Գօր'կիյ. «Իմ ուղեկիցը», թարգմ. Ա. Աթայեան, Թիֆ-
լիս, 1904, գ. 10 կ.։

*) «Гражданская община Античного мира.» Фюстель де Куланжа, Եր. 31:

- 3) Միք. Խորայէլեան՝ «*», Թիֆլիզ, 1904, գ. 15 կ.:
- 4) Աստվածական՝ «Երկերի ժողովածու», ա. հատ., Թաւրիզ, 1904,
գ. 1 ր.:
- 5) ? «Ճապօնիա», Թիֆլիզ, 1904, գ. 25 կ.:
- 6) ? «Արբեցողութեան դէմ», Թիֆլիզ, 1904, գ. 15 կ.:
- 7) Ռ. Հոլէս՝ «Հրաշալի դար», թարգմ. Ս. Լիսիցեան, Թիֆ-
լիզ, 1904, գ. 80 կ.:
- 8) Արիստակէս եպ. Սեղբակեան՝ «Հայաստանեայց եկեղեցու
պատկերյարգութիւնը», մասն ա., Ս.-Պետերբուրգ, 1904,
գ. 1 ր. 50 կ.:
- 9) Լէօ «Այծարածը», Բագու, 1904, գ. 10 կ.:
- 10) Խր. Կոչուկ-Յօաննեսօն: „Старинные армянские надписи
и старинные рукописи въ предѣлахъ юго-западной Руси
и въ Крыму“.
- 11) Մ. Գոր'կի «Պատմուածքներ», ա. և թ. գրքոյկ, թարգմ.
Զ. Զ., Թիֆլիզ, 1904, գ. 30 կ.:
- 12) Բակուրան՝ «Մի տեսութիւն Կիլիկիոյ Հայկական իշխա-
նութեան վրայ», Նիկոսիա, 1904, գ. 1 ր. 25 կ.:
- 13) «Տեղեկատու Բագուի Հայոց Մարդասիրական Ընկերու-
թեան գործունէութեան», Բագու, 1904:
- 14) С. М.-Ադամօն: „Практическое руководство для сост. бумаг по
дѣламъ гражданск. судопроизводства въ Закавказск.
краѣ“, Тифлисъ, 1904, п. 1 ր.
- 15) „Уставъ Тифлисскаго общества вспомоществованія слуша-
тельницамъ С.-Петербургск. женск. Медицинск. Ин-
стит. и высш. женск. курсовъ, окончившимъ среднеуч.
зав. Кавказск. уч. округа“, Тифлисъ, 1904.
- 16) «Գուտտենբերգ» գրախանութի հայերէն գրքերի ցուցակը,
Թիֆլիզ, 1904:
- 17) „Կատոլոցъ книжн. магаз. Гуттенбергъ“, Тифлис, 1904.
- 18) Հ. Ս. Երեմեան՝ «Միկթարեան վեհը», Վենետիկ, 1904:
- 19) Հ. Ա. Ղազիկեան՝ «Յորելեանը Իգնատիոս վ.-ի Կիւրեղ աբբա-
հօր», Վենետիկ, 1904:
- 20) Հ. Ա. Ղազիկեան՝ «Հայկական նոր մատենագրութիւն»,
Վենետիկ, 1904:
- 21) «Տարեկան հաշիւ վասն 1902 ամի ազգային, Կրօնական,
բարեգործական և կրթական հաստատութեանց Նոր-Զու-
ղայի և չորից գպրոցց գիւղօրէից», Նոր-Զուղա, 1903.
- 22) Բժ. Վ. Արծրունի՝ «Մաղիկ և պատուաստ», Թիֆլիզ, 1904,
գ. 15 կ.: